ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

«ԱԶՆԻՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ» ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՈՐԱՅԱՆԻ ՀԱՅԵՑՈՒԹՅԱՄԲ

Նիկողայոս Զորայանը առաջին հայ տնտեսագետն է, որը, ըստ էության, քննության առարկա է դարձրել քաղաքատնտեսության հիմնական կատեգորիաները և, որպես ազատամտական ուղղության ներկայացուցիչ, դրվատել արևմտյան տնտեսաձևի սկզբունքները: Տնտեսագիտությունը նրա լուսավորչական ծրագրի բաղկացուցիչներից է: Ն.Զորայանի գլխավոր աշխատությունը՝ «Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ», լույս է տեսել 1849-ին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայ իրականության մեջ աշխուժանում էին դրամատիրական հարաբերությունները՝ պայմանավորելով հասարակության պահվածքի նոր շփումների անհրաժեշտությունն ու ձևավորումը: Այդտեղից էլ աշխատության նպատակը այդ «ազնիվ գիտության օգուտներուն ազգակիցներիս մասնակից ընեմ», «մատաղ հասակեն» ծանոթացնելու այդ «հարկավոր գիտութեան» սկզբունքներին[1], վկայակոչելով Ժ.Բ.Սեյի այն միտքը, թե մինչև ժողովրդի մեծ մասը տեղյակ չլինի դրանց «ազգաց իրական օգուտ մը չի կրնար ընել»[2]: Եվ ահա նա ուրվագծում է տնտեսական գիտության ուսումնասիրության այն բաղադրիչները, որոնք պայմանավորում են ազգի տնտեսական բարեկեցությունը: Ինչպես հայտնի է, մերկանտիլիստները որպես հարստության աղբյուր հռչակում էին շրջանառության ոլորտը, ֆիզիոկրատները այդպիսին դիտում էին գյուղատնտեսությունը, Ա.Սմիթը տնտեսական գիտության մեջ մտցրեց այն պարզ գաղափարը, թե ժողովուրդների հարստության աղբյուրը աշխատանքն է: Ն.Զորայանի տնտեսական գիտության վերաբերյալ մտածողությունը ելնում է

---

[1] Նիկողայոս Զորայան, Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ, Կոստանդնուպոլիս, 1849, առաջաբան:

[2] Նույն տեղում, էջ 336:

հարստության ստեղծման մասին հենց այս վերջին ըմբռնումից. «Արդ, ի՞նչ կը սովորվեցունէ քաղաքական տնտեսությունը. - արդար ճամբով հարստանալ։ -Ո՞րն է հարստանալու ընտրած արդար ճամբան.-աշխատությունը։ Քաղաքական տնտեսությունը մեզի կը սովորեցունէ նախ, որ հարստման ամենահարկավոր պատճառներուն մեկը աշխատությունն է, առանց անոր կամ հարստում չրլլար...» և ապա «թե որոնք են աշխատութեան նյութ տալու աղբյուրները, և անոնք ինչ կերպով բանեցնելու է որ աշխատողին ջանքը բեղմնավորելով հասարակության մեծամեծ բարիք ծագին»[1]։ Պատմությանը հայտնի այլ մեթոդներով՝ ինչպես օրինակ պատերազմների միջոցով ձեռք բերած հարստությունը, հասարակությանը մղում է դեպի չարիքների, ծուլության, հափշտակությունների ու հակադրությունների ուղին։ Աշխատանքը հարստության աղբյուր դիտելու Ն.Զորայանի դիտարկումը, առիթ չի կարող դառնալ այնպիսի բանաձևումների համար, թե նա հետևել է դասական տնտեսագիտության արժեքի աշխատանքային տեսությանը։ Դա եղել է ժամանակի տուրքը, երբ հայ տնտեսագիտական մտքի պատմաբանները պարզապես դրանով մարքսիզմի տնտեսական ուսմունքի հետ համարժեք հասկացություններ էին փնտրում տնտեսագետների հայացքներում։ Ինչպես ավելի ուշ կնկատենք, նա բնավ չի եղել արժեքի աշխատանքային տեսության հետևորդը։ Տնտեսական գիտության ուսումնասիրության ոլորտները շատ ընդգրկուն են և բոլորը թվարկել հնարավոր չէ, այնուամենայնիվ նա հատկապես կարևորում է կապիտալի, մարդկանց «նյութական ու իմացական կարողությունների», տնտեսական ազատության, հարկահանության, սեփականության իրավունքի, «գործավարի ու ձեռնարկուի փոխադարձ առնչությունները կարգի կանոնի դնելու» հարցերը։

Ն.Զորայանն իր աշխատությունը սկսում է փոխանակության վերլուծությունից։ Տնտեսական էվոլյուցիայի շրջաններում սահմանափակ էին մարդկանց պահանջմունքները։ Մարդիկ միմյանց հետ հարաբերվելու կարիք չունեին, պահանջմունքների բավարարումը կատարվում էր բնության բարիքների սպառման միջոցով։ Սակայն, «Մարդուս պիտույքը շատանալու սկսած վայրկեանեն, ուրիշի օգնութեանը չի կարոտիլ անհնար է»։ Մարդն ամեն ինչ արտադրել չի կարող, ուստի փոխանակությունը դառնում է անխուսափելի, որպես «հանգիստ ապրելու ու միանգամայն քիչ աշխատելու հնարք»։ Այսինքն, Ն.Զորայանը փոխանակությունը դիտում է ոչ միայն որպես պահանջմունքների բավարարման, այլև աշխատանքի խնայողության կարևորագույն պայման։ Այն դառնում

[1] Նույն տեղում, էջ 328-329։

է տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման, հասարակության պահվածքի հիմնարար հարաբերության ձևը, ինչպես առանձին երկրների ներսում՝ մարդկանց, այնպես էլ երկրների միջև։ Որքան ընդլայնվում են աշխատանքի հասարակական բաժանման սահմանները, այնքան մարդիկ ավելի շատ պահանջմունքները բավարարում են փոխանակության միջոցով, այնքան փոխանակությունը դառնում է «շահավոր»[1]։ Ազգերի միջև առևտուրը սահմաններ չի ճանաչում. «վաճառական ազգը բանաստեղծին երեվակայելը կընմանի, անոր սահմանը խիստ ընդարձակ է»[2]։ Իսկ դրա համար պահանջվում են որոշակի պայմաններ, որոնցից ամենագլխավորներից մեկը, ինչպես կասեր Դիդրեյ Նորսը, խաղաղությունն է. «Մարդիկ,- գրում է Ն.Զորայանը,- հայտնի բան է, որ առանց վաճառականության կատարյալ բարեկեցության ու հանգստության մեջ չեն կրնար ապրիլ. ուրեմն շատ ցանկալի է, որ ազգերը իրարու հետ միշտ սիրով վարվէն, խաղաղությամբ իրարու հետ միանան, բայց դժբաղդաբար նախանձը՝ չարաշահությունը՝ մարդու այն աստիճան կրկուրացնե, որ շատ ատեն սոսկալի պատերազմներ կուգան՝ ազգաց մեջ եղած վաճառականությունը՝ արյունահեղ թշնամություններով կրխափանեն, խաղաղությունը՝ վաճառականության հոգին է»[3]։

Առևտուրը հեշտացնող «ընդհանուր միջոցը» փողն է, որը թույլ է տալիս լուծելու այն դժվարությունները, եթե փոխանակությունն իրականացվեր բնաիրային հիմունքներով։ Պարզապես շատ գործարքներ կմնային չիրացված։

Հայտնի է, որ պատմականորեն իբրև փոխանակության միջոց օգտագործել են տարբեր ապրանքներ, որոնք սակայն չունեին ոսկու կամ արծաթի «հարմարությունը»։ Փողի ծագման ու իբրև փոխանակության միջոցի վերաբերյալ Զորայանի դիտողությունները հանգում են հետևյալին. «... ոսկիե, արծաթե ու պղնձե դրամներուն ամեն տեղ անցնելուն պատճառը՝ վրայի դրոշմը չէ, այլ ըստ ինքեան յարդ մը ունենալնին է. և ասոր փորձն ալ սա է որ, երբ որ քանի մը հինգնոց մեկտեղ հալեցնես ու ձոյլ մը ընելու ըլլաս ու ոսկերիչին տանիս, քիչ մը պակասով գիներնին քեզի կվճարե։ Նմանապես, պղինձը՝ ինչ ձևով ըլլա, հարգ մը ունի։

Դրամի համար ոսկին, արծաթը ու պղինձը չի գործածված, մարդիկ ուրիշ նյութեր գործածեցին. և մինչև հիմա ալ վայրենի ազգաց մեջ կը գործածին, ինչպես են տեսակ տեսակ խեցիներ, ծխախոտ (թութուն), աղ, կտավ, կով, ձի, ցորեն, մորթ, բեվեռ, երկաթ և այլն։ Բայց ասոնց մեկը՝

[1] Նույն տեղում, էջ 4-6։
[2] Նույն տեղում, էջ 10։
[3] Նույն տեղում, էջ 13։

ոսկիին, արծաթին ու պղնձին հարմարությունը չունին։ Ասոնք ոչ կը կոտրին, ոչ կը մաշին և ոչ կըփտտին։ Իրենց հարգին նայելով՝ քիչ տեղ կբռնեն. որչափ մանր ուզես կրնաս բաժանել...։ Ահա այս պատճառներուն համար է, որ ոսկին, արծաթը ու պղինձը ամեն ազգ իրեն դրամ ըրեր է»[1]։ Միակողմանի է ներկայանում այն կարծիքը, թե Ն.Զորայանը փողը դիտում է միայն «շրջանառության հարմարության», այսինքն «փոխանակության միջոցի» տեսակետից։ Նախ, ինչպես նկատել ենք, նա տեղին սահմանազատում է այն տարբերությունները, որ առկա է ոսկու և արծաթի՝ որպես փողի առավելությունները, փողի ֆունկցիա կատարող այլ ապրանքատեսակների նկատմամբ։ Եվ, որ շատ կարևոր է, նա նշում է, որ ոսկին ու արծաթը ունենալով ներքին արժեք, դրամական միավորի իրենց բաժանումներով՝ որպես չափի մասշտաբ, օգտագործվում է այլ ապրանքների գնահատման՝ այսինքն դրանց համեմատական արժեքների չափակցման համար՝ որպես արժեչափի միջոց։ Ինչ վերաբերում է թղթադրամին, այն իրական արժեք չունի ու «...թեպետ իբր իրական դրամ կառնեն կուտան, բայց իրոք դրամ չէ, այլ տեղը դրամ տալու խոստման գիր մը կամ մուրհակ...»[2]։

Ն.Զորայանի այն միտքը, թե «Ասիկայ այնչափ ճշմարիտ է, որ հասարակորեն ոսկին արծաթեն գրեթե քսան անգամ ավելի շատ ծախքով ու աշխատությամբ ձեռք գալուն համար, ոսկին ալ արծաթեն քսան անգամ ավելի հարգ ունի»[3] միտքը հիմք է տվել այն հետևության համար, թե նա հարել է արժեքի աշխատանքային տեսությանը[4]։ Մինչդեռ դրան անմիջապես հետևում է արժեքի աշխատանքային տեսությունը մերժող բացատրությունը. «Երբոր ցանկալի իր մը աշխատությամբ միայն կըստացվի, հարկավ մարդիկ այն իրը ստանալու համար կաշխատին. և հասարակաբար շատ հարգ ունեցող բաներն ալ շատ աշխատությամբ ձեռք ինկած բաներն են։ Ասիկե ոմանք սխալելով կարծեցին որ բանի մը հարգը՝ իր վրայ կատարված աշխատութենեն առաջ եկած է։ Բայց աս սխալ կարծիք է, ինչպես որ տնտեսականին մեկը՝ սա հետևյալ օրինակովը աղեկ կը հաստատե։ Ըսենք թե երկու ձկնորս ձուկ որսալու կերթան,

---

[1] Նույն տեղում, էջ 18-19։

[2] Նույն տեղում, էջ 20։

[3] Նույն տեղում, էջ 31-32։

[4] Խ.Գ.Գուլանյան, Ուրվագիծ հայ տնտեսագիտական մտքի պատմության, Եր., 1959, էջ 196, Ն.Ռ.Թովմասյան, Հ.Հ.Թամրազյան, Գ.Թ.Պապիկյան, Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Եր., 1988, էջ 163-164։ Այս հարցում ավելի իրավացի է Ս.Զուրաբյանը՝ տե՛ս Ս.Շ.Զուրաբյան, «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր», Եր., 1959, էջ 85-86։

ու անձրևին ու ցուրտին տակը՝ կաշխատին ձուկ բռնելու, հուսալով որ բռնածնին շատ ստակի վաճառեն։ Բայց թե որ ասոնց մեկը՝ բոլոր գիշերը աշխատելեն ետեվ միայն մեկ պզտիք ձուկ մը բռնե ու մեկալը հարյուր հատ բռնելու ըլլա, կըրնա՞ մի առաջինը իր մեկ ձուկը՝ մեկալին հարյուր ձկան գինովը ծախել։ Թեպետ երկուքին աշխատությունը մեկ եղած է, բայց անհնար է որ մեկ ձուկը՝ հարյուրին հավասար բռնե։

Ըսածիս ճշմարտությունը հաստատելու համար ուրիշ ապացույց մըն ալ սա է։ Երբոր մեկը ճամբան գացած տեղը գոհար մը կը գտնե, անիկա ըստանալու աշխատություն չի քաշելուն համար այն գոհարին հարգը կրնա մի պակսիլ։ Ուրեմն պետք է համոզվինք որ իրի մը հարգը իր վրա կատարած աշխատութենեն չէ, այլ այն իբր ըստ ինքեայն հարգ ունենալուն համար է որ մարդիկ անիկա շինելու կամ բուսցընելու համար կաշխատին»[1]։

Ն.Զորայանն ավելի է հստակեցնում իր ասելիքը, թե արժեքի որոշման հարցում ինչ է ժառանգել տնտեսագիտական մտքի կողմնորոշումներից. «Ուստի ըսածներիս հոս կրկին բովանդակելով՝ կը նայինք որ իր մը հարգ ստանալու համար, նախ պետք է որ սահմանավոր կամ պակաս ըլլա։ Երկրորդ, որևիցե կերպով ուրիշին ցանկալի բան մը ըլլա։ Երրորդ՝ փոխադրելի ըլլա»[2]։ Նա բերում է օրինակներ՝ ցույց տալու, որ արժեքի մեծությունը որոշող հիմնական գործոններն են հազվագյուտությունն ու օգտակարությունը։ Նշված գորոծոնները տնտեսագիտական մտքի համար հատկապես բնորոշ են դարձել XIX դարի 70-ականներից սկսած։ Սակայն, միաժամանակ հայտնի է, որ Դ.Ռիկարդոն արժեքի աշխատանքային տեսության իր իսկ որոշակի մոնիստական հայացքի նկատմամբ ունեցել է «կասկածներ և երկյուղներ», որոնք «արժեքի աշխատանքային տեսության պատմության մեջ ավելի կարևոր դեր են խաղացել, քան նրա պոզիտիվ պնդումները»[3]։ Մասնավորապես, նա նշում է ապրանքների փոխանակային արժեքի ոչ թե մեկ, այլ «երկու աղբյուրներ»՝ հազվագյուտությունը և աշխատանքի քանակը[4]։ Առաջինը որոշում է չվերարտադրվող ապրանքների արժեքը, իսկ երկրորդը՝ այնպիսի ապրանքների, որոնց քանակը կարող է ավելացվել մարդկային աշխատանքով և, որոնց արտադրության մեջ մրցակցությունը չի ենթարկվում որևէ սահմա-

---

[1] Ն.Զորայան, նշվ. աշխ., էջ 32-33։

[2] Նույն տեղում, էջ 31։

[3] Блауг М. Экономическая мысль в ретроспективе, М. 1994» с. 86

[4] Д.Рикардо, Соч., т. 1, М., 1955, с.33

նափակումների»[1] և որ միայն այս վերջին դեպքում կարելի է խոսել ապրանքների համեմատական գների մասին։

Ն.Զորայանը լավատեղյակ էր Դ.Ռիկարդոյի աշխատությանը և կրել է նրա հայացքների ինչ-ինչ ազդեցությունները։

Դիտենք աշխատավարձի հարցը։ Նրա կարծիքով աշխատանքները լինեն «մարմնավոր» թե «մտավոր»՝ երկաթագործ, ոսկերիչ, բժիշկ թե իրավաբան, ունեն տարբեր դժվարություններ, սակայն դրանք չէ, որ պայմանավորում են աշխատավարձի չափը, այլ «կատարուած գործքին հարգը», «Ամեն տեսակ գործքի կամ աշխատանաց հարգն ալ, ուրիշ ամեն իրանց հարգին պես իրենց աշխատութենեն կամ քչութենեն կախված է» Իսկ մյուս մասով էլ պայմանավորված է մարդու «բնական հանճարով»[2]։ Ինչպես ակներև է, աշխատավարձը նույնպես ենթակա է պահանջարկի ու առաջարկի, հազվագյուտության, սակավության կարգավորիչ ուժերին։ Ն.Զորայանի դիտողությունները միանգամայն տեղադրվում են դասական տնտեսագիտության ազատամտական հայեցության մեջ։ Ինչպես հայտնի է, XVII դարի Անգլիայում աշխատավարձը կարգավորվում էր օրենսդրական ձևով։ Ժամանակի տնտեսագետներից Վ.Պետին ելակետ ուներ նրա այնպիսի մակարդակի սահմանումը, որն աշխատողին կապահովի կենսամակարդակի նվազագույնով։ Կրկնակի բարձրացրու բանվորի աշխատավարձը, ասում էր Պետին, նա կրկնակի քիչ կաշխատի, «իսկ դա հասարակության համար նշանակում է նույնքան աշխատանքի կորուստ», հարստության կորուստ[3]։ Տնտեսական գիտությունն այդ ժամանակաշրջանում, ինչպես նկատում է Ն.Զորայանը, դեռևս թույլ էր զարգացած, և միայն հետագա զարգացման և հատկապես XIX դարում պարզ դարձավ, որ օրենքներ սահմանելը «ճարտարության զարգացմանը վնաս տալեն ուրիշ բանի օգուտ մը չունի»[4]։ Եվ նա բերում է օրինակներ ցույց տալով, որ օրենքներով աշխատավարձի սահմանների որոշումը պարզապես ավելի շուտ կտանի գործազրկության աճին և տնտեսական արդյունավետության կրճատմանը. և ուստի «Աժան գինով բան առնել ու բան շինել տալուն ամենեն հարմար եղանակը՝ առնողն ու վաճառողը՝ աշխատողն ու աշխատացնողը՝ բոլորովին ազատ ձգիլն է, որ իրենց սակարկությունը իրենք ընեն, առած ու տված իրերուն վրայոք հարմար դատածին ուզեն ու

---

[1] Նույն տեղում, էջ 34։

[2] Ն.Զորայան, նշվ. աշխ., էջ 35։

[3] Вильям Петти, Экономические и статистические работы, М., 1940, с. 70-71

[4] Ն.Զորայան, նշվ. աշխ., էջ 42։

տան, թե որ իրարու կը հաճին նե՝ փոխանակությունին կատարեն, թե որ չեն կրնար հաճիլնե ետ կենան»[1]։

Համաձայն դասական տնտեսագիտության դոկտրինայի տնտեսական ազատությունը թույլ է տալիս հասնելու ոչ միայն անհատների, այլ նաև հասարակական բարեկեցության ընդհանուր աճին։ Ազատ տնտեսական գործունեության առավելությունների վերաբերյալ ստորև բերվող մտքերը համապատասխանում են դասական տնտեսագիտության հայեցությանը. «Վաճառական մը որչափ շահասեր ալ ըլլա, չէ կրնար հետամտության իշխանութենեն ազատիլ, որուն վճիռները՝ կառավարութեանց օրենքներեն բյուրապատիկ ավելի հզոր ու ազդու են։

Արդարեվ երբ որ կառավարությունները մարդուս աշխատանքները նեղ օրենքներով չեն կաշկանդեր, ազատ կըթողուն, երկրացիք իրանց գիտցած արհեստներուն կզբաղին, միևնույն տեսակի եղող արհեստավորներուն թիվը կըշատնա, մեջերնին հետամտությունը կըծագի, ամեն մարդ կըջանա որ իր շինած բանը մյուսներեն աղեկ ու աժան լինելով իրեն քաշե» կամ «Ուստի ազատ փոխանակության դրությունով մեկ կողմեն արհեստները կը կատարելագործին, մեկալ կողմեն ալ հաստուածները՝ ավելի առատ, աժան ու աղեկ ըլլալով՝ հասարակությունը ավելի բարեկեցիկ կըլլա։ Անանկ, որ գործավորաց բարոյական ու արհեստական կրթությանը հետ՝ ազատ աշխատություն մը եղած տեղը՝ անտարակույս մարդիկ ամենեն ավելի հանգիստ ու աժան կերպով մը կապրին»[2]։

Աշխատավարձի, որպես եկամտի խնդիրն առնչվում է երկրում ստեղծված հարստության բաշխման հարցի հետ։ Սակայն, նախ խնայողության մասին։ Ն.Զորայանի կարծիքով խնայողությունը պետք է դառնա հասարակության պահվածքի կարևոր հատկանիշներից մեկը, կյանքի ամեն տեսակ պատահարներին, ձախորդություններին դիմակայելու համար։ Ուստի խնայող մարդը «իր ծախքը իր վաստակին համեմատի», սովորի «չափավորության, բավականասիրության ու պարզության», ինչպես ասում է Դ.Ռիկարդոն, «Մարդու սեղանը որչափ շեն ըլլա, մեռած ժամանակ՝ սնտուկն ալ այնչափ դատարկ կըլլա»[3]։ Ժուժկալությունն ամեն մի բանական մարդու համար պետք է լինի ուղեցույց, որը նրան կապահովի բարեկեցություն, ինչպես նաև հարստություն։ Հասարակությունը միշտ էլ չարակամ վերաբերմունք է ունեցել հարուստ մարդկանց նկատմամբ կարծելով, որ «եթե հարուստ մարդոց ձեռքեն իրենց հարստությունը առնվի ու աղքատաց մեջ բաժանվի, ու անկե ետեվ նորեն հարստանալու

[1] Նույն տեղում, էջ 44։

[2] Նույն տեղում, էջ 44-46։

[3] Նույն տեղու, էջ 24։

մեկուն թող չի տրվի, աղքատաց վիճակը ավելի աղեկ կըլլա»[1]։ Ն.Զորայանը մերժում է նման սոցիալական դոկտրինան, նախ, որ հավասարության սկզբունքը երկար պահպանվել չի կարող, և տարբեր պատճառներով պայմանավորված այն պիտի խախտվեր։ Եվ ապա հարստության այդպիսի մասնատումը խիստ բացասական հետևանքներ ունենալով ձեռնարկատիրական գործունեության վրա, չէր նպաստի սոցիալական հարցի լուծմանը։ Դ.Ռիկարդոն, որի կարծիքով աշխատավարձի կարգավորումը պետք է թողնվի «ազատ մրցակցությանը» և հանդես էր գալիս պառլամենտում աղքատների մասին օրենքի ընդունման դեմ, ասում էր, թե «փոխանակ աղքատներին հարուստներ դարձնելու, կարծես թե նպատակ ունեն հարուստներին աղքատներ դարձնելու»[2]։ Այդ նույն ոգով Ն.Զորայանը նկատում է, թե հարստության բաժանման արդյունքում «Իրավ է, որ հարուստը կաղքատանա, բայց աղքատին ալ վիճակը աղեկ ըլլանուն տեղը՝ առավել գեշ կըլլա»[3]։

Իսկ իրականում միշտ էլ հասարակության մեջ տեղի է ունենում «անուղղակի կերպով» հարստության բաշխում, որով հարուստները աղքատներին մասնակից են ունենում իրենց եկամուտներին. հիմնում են մեծ գործարաններ, մշակում մեծ հողատարածություններ, ընդլայնում առևտրական գործը, կատարելագործում արհեստները (որն անհնար է փոքր հարստությունների ժամանակ), դրանով իսկ «ընշեղ մարդոց եկամուտ, փոխ առնողներուն վաստակ, գործավորներուն վարձ, ու հասարակության ալ առատություն, աժանություն ու վայելքը կբերեն»[4]։

Ն.Զորայանն ի վերջո հանգում է մի հետևության, որի ուղեցույցը շահերի ներդաշնակության տեսությունն է։ Համընդհանուր ազատության պայմաններում հասարակությունն իրար կապող սկզբունքը սոցիալական շերտերի միջև ոչ այլ ինչ է, քան փոխանակվող ծառայությունների ամբողջություն։ Հասարակության բարոյական կոդեքսը պետք է հիմնված լինի ոչ թե անհանդուրժողականության, այլ համերաշխության վրա. «Երբ որ հոյակապ ու ամուր պարիսպը մը կը տեսնենք, անոր մեջի ամեն քարերը մեծ կամ ամենը մանր չեն. անոնց մեջ խիստ մեծն ալ կա, միջակն ալ, խիստ մանրն ալ, ու ամենուն մեկեն միավորությամբ՝ այն հաստատուն պարիսպը կը շինվի։ Ասանկ ալ, մարդկային ընկերությունները միայն հարուստ մարդիկներե կամ միայն աղքատներե չեն շինվիր, այլ նախախնամությունը անանկ տնօրիներ է, որ կերպ կերպ պետքերով

---

[1] Նույն տեղու, էջ 50։

[2] Д.Рикардо, Соч., т. 1, М., 1955, с.95.

[3] Ն.Զորայան, նշվ. աշխ. էջ 54։

[4] Նույն տեղում, էջ 57։

հարուստն ու աղքատը իրարու հետ կապրին։ Անոր համար, ամեն բարեկարգ ընկերության մեջ, հարուստն ալ տեղ ունի, միջակն ալ, աղքատն ալ։

Ուրեմն ցանկանք, որ ամեն տեղ ստացուածք ապահովություն գտնեն. հարուստ՝ աղքատ ամեն մարդ իր ինչիցը տերը ըլլա, համեստ ու արդար ճամբով ամեն մարդ կրցածին չափ վաստակի, ու իր վաստակն ալ՝ հարմար դատած ճամբովը ծախե, առանց ուրիշին վնասելու»[1]։

Հարստության ստեղծման հարցի Ն.Զորայանի դրվածքը իր շատ կողմերով առնչվում է կապիտալ հասկացության հետ։ Հասարակության մեջ վերջինիս վերաբերյալ նեղ ընկալում է դրսևորվում, այն հաճախ նույնացնելով դրամի (դրամագլխի) հետ։ Մինչդեռ իր ընդգրկումների մեջ այն շատ «ավելի ընդարձակ նշանակություն ունի», որպես «նյութական կամ աննյութական բոլոր այն միջոցները, որ կենաց հարկավոր եղած բարիքը հաստատելու պետք կըլլան»։[2] Սրանց մեջ մտնում են և ձկնորսի նավակը, և հյուսնի սղոցը և երկաթագործի գործիքները, մարդու նյութական ուժը՝ հմտությունը, արվեստը և այլն։ Նա նշում է կապիտալի բաժանումը հիմնական և շրջանառու մասերի, սակայն հարստության ստեղծման հարցում ընդլայնում արտադրողական ուժեր հասկացության սահմանները, նրա մեջ ներառելով «նյութական կամ աննյութական» միջոցները, որոնք ծառայում են ազգի հարստության ստեղծմանը։

Որքան ավելին լինի կապիտալը, այնքան մեծ կլինի մարդկանց աշխատելու հնարավորությունը։ Հարուստների կողմից «վաստակաբեր գործքերու վրա» կատարած սկզբնական ծախքը, շրջապտույտի վերջում «ծախսված դրամեն ավելին կբերե ու անանկով այն գործին ձեռք զարնողին հարստությունը կավելացնե»[3]։ Եվ այդպես տարեց-տարի շրջապտույտների արդյունքում ընդլայնվում է արտադրությունը և ավելանում ազգային հարստությունը։ Ն.Զորայանը այս առումով վկայակոչում է Թյուրգոյի խոսքերը. «Երկրի մը ընչից (կապիտալից-Ռ.Ս.) շրջաբերությունը մարդոյս մարմնոյն մեջ արյան շրջաբերությանը կը նմանի» և ընդհանրացնում, թե «Հիրավի, արյունը մարդոյս մարմնոյն կենդանությանը համար որչափ հարկավոր է նե՝ ինքն ալ ընկերական մարմնոյն բարեկեցությանը համար նույնչափ պիտանի են»[4]։

Խոսելով հասարակական կյանքում միացյալ ուժի կամ, ինչպես ինքն է անվանում, «ընկերության մասին», նա դա համարում է ցանկացած գործունեության հաջողության երաշխիքը՝ առավելապես արտադրության

---

[1] Նույն տեղում, էջ 60-61։

[2] Նույն տեղում, էջ 74։

[3] Նույն տեղում, էջ 62-63։

[4] Նույն տեղում, էջ 70։

մեջ և առնտրում։ Այն թույլ է տալիս միավորելու հարստացման երեք տարրերը՝ գիտությունը, աշխատությունը և կապիտալը (խելք, ուժ, ինչք – Ն.Զ.)։ Այդ է վկայում Եվրոպայի հասարակական զարգացման հետագիծը։ «Ընկերական ոգու» արմատավորումը հայկական կյանքում, թույլ կտա լուծել առանձին տնտեսական միավորների հնարավորությունների սահմանափակության խնդիրը[1]։

Մեքենաները լինելով կապիտալի բաղկացուցիչը, կարևոր նախադրյալներ են հանդիսանում հասարակության բարեկեցության համար։ Եվ վնասակար պիտի դիտել այն հայացքը, թե մեքենաները բացասական ազդեցություն են ունենում՝ կրճատելով զբաղվածությունը։ Ն.Զորայանը նշելով մեքենայական արտադրության բերած առավելությունները, հարցը դիտում է երևույթի արժեքավորման ընդհանուր չափանիշների դիրքերից հակառակ տեղ գտած հետահայաց նկրտումներին. «աշխարհիս մեջ կատարյալ բան չկա, ու մանավանդ քաղաքական վիճակին մեջ մեզի ավելի ընդհանուրին օգուտը պետք է, քան թե մասնավոր մարդկանց շահը, իսկույն կը խելամտինք, որ մեքենայից գործածությանը դեմ խոսված խոսքերը մտիկ ընելու բաներ չեն»[2]։ Բայց զբաղվածությունը կապված է նաև մի այլ խնդրի՝ ազգաբնակչության աճի հետ։ Համաձայն մերկանտիլիզմի դոկտրինայի որքան երկրի բնակչությունը շատ է, այնքան երկիրը հզոր է, որ «ամենեն հարուստ տերությունը՝ ամենեն շատ ժողովուրդ ունեցողն է»։ Նույնիսկ բնակչության աճը խթանելու նպատակով, ինչպես, օրինակ, Անգլիայում, երեխաներ չունեցողների վրա հարկեր սահմանեցին։ Բայց տնտեսական գիտությունը սովորեցնում է երևույթները գնահատել որոշակի իրական կապերի մեջ, մասնավորապես, «որ այն ժամանակը միայն ժողովուրդը մը իր երկրին՝ իր տերությանը օգուտ կընե, երբոր կրնա ինքըզինքը իր աշխատությամբը ապրեցնել, իր կեանքը ուրիշի բեռ չըլներ, կամ իր սպառածին փոխարեն ինքն ալ իր աշխատութեան պըտուղովը կը հարստացնե։ Ուստի առանց այս վերջի պայմանը մեջ բերելու, անտարբեր կերպով մը բազմամարդության խրախույս տալը՝ տնտեսական օրինաց դեմ գործք մըն է»[3]։ Ազգի անհամապատասխանությամբ պիտի բացատրել արտագաղթի ու քաղաքական խռովությունների դրսևորումները։ Բայց տնտեսական լեզվով ասած երևույթի ու էության այդ անհամապատասխանությունը, մի այլ կարևոր իմացական կողմ ունի. «անանկ երկրին մեջ հարկավ գործավորներուն շատութենեն մեջերնին հետամտություն մը կը պատճառի, վարձուած գինը կը նվազի,

[1] Նույն տեղում, էջ 153-157։

[2] Նույն տեղում, էջ 83-84։

[3] Նույն տեղում, էջ 178-179։

ու հետևաբար ալ շատերուն վրա ընդհանուր չքավորություն մը կը բռնանա...»[1], դրանով իսկ իջեցնելով աշխատողների կենսամակարդակը։ Ինչպես մեքենաների կիրառման, այնպես էլ ազգաբնակչության աճի հարցերում Ն.Զորայանի հայացքները աղերսներ են հայտաբերում ինչպես Մալթուսի, այնպես էլ Սիսմոնդու տեսության հետ։ Երկուսն էլ, ի վերջո, նպատակ ունեն հաստատել հավասարակշռություն հարստության (եկամուտների) աճի և բնակչության աճի միջև։ Նա խոսում է մահացության աճը պայմանավորող և այն կրճատող ինչ-ինչ գործոնների մասին, իր ընդհանուր բնութագրություններում դավանելով նշված տնտեսագետների հայացքներին. «... անհերկբայելի կերպով մը հիմակու տնտեսականները աղեկ հաստատեցին, որ մեկ կողմեն մարդիկ հետզհետե յանչափ բազմանալու վրա են ու մյուս կողմեն ալ կերակուրը հետզհետե կը պակասի, ուստի մենք ալ կամ պետք է որ մարդկանց շատանալուն չըցանկանանք, կամ հետզհետե կերած կերակուրներուս չափը քչացունենք» Եվ որովհետև կերած կերակուրներուս չափը քիչցունելը անհնար է, ուստի կը պարտավորինք որ խոհեմության թելադրած ամեն ըզգուշությունները ընելով՝ մարդկանց չափը միշտ կերակրոց չափին համեմատ ընենք, կամ որ նույնն է սնունդնիս օր օրի առատ ընելու աշխատինք»[2]։ Ուստի կառավարությունների քաղաքականությունը պետք է համապատասխանի այն «բնական ու խոհեմ կանոնին», համաձայն, որի «Կերակուրը պետք է բազմամարդ դրութենե առաջ ըլլա և ոչ թե բազմամարդությունը քան զկերակուրը»[3]։

Մերժելով «հասարակաց» կամ այլ ձևերով գոյություն ունեցող սեփականության իրավունքը, նա հողի նկատմամբ մասնավոր սեփականությունը համարում է գյուղատնտեսության զարգացման ստեղծագործ ուժի պայմանը, որն իր թերություններով հանդերձ «մարդկային ազգին բարօրությանը՝ առատ աղբյուրներուն մեկն եղած է»[4]։ Նա որոշ դիտողություններ է կատարում ռենտայի կամ ինչպես ինքն է անվանում «հաս»-ի առաջացման վերաբերյալ։ Հողի սեփականատերերը հաճախ ոչ թե իրենք են մշակում հողը, այլ վարձակալությամբ տալիս են մշակելու ուրիշներին. « Ինչպես որ դրամը վարձողը՝ իր վաստակին մեկ մասը՝ իբր շահ դրամին տիրոջ կուտա, ասանկ ալ ուրիշի կալուածը վարձողը՝ իր ըրած վաստակին մեկ մասը իբր հաս՝ կալվածին տիրոջը կուտա...»[5]։ Ռենտայի

---

[1] Նույն տեղում, էջ 182։
[2] Նույն տեղում, էջ 189-190։
[3] Նույն տեղում, էջ 190։
[4] Նույն տեղում, էջ 104։
[5] Նույն տեղում, էջ 105։

առաջացումը նա պայմանավորում է հողերի «արգասավոր ու միանգամայն սահմանավոր ըլլալու» հետ[1]: Նրա դիտողություններն այս հարցում խիստ կցկտուր են:

Ն.Զորայանը արծարծումներ ունի նաև պետության կարգավորման ոլորտներ հանդիսացող հարկերի, երկրի առևտրային հաշվեկշռի և այլ հարցերի վերաբերյալ:

Անդրադառնալով հարկերի անհրաժեշտության խնդրին որպես անհրաժեշտ եկամուտների պետության հայտնի ֆունկցիաների իրականացման համար, նա ընդհանրացնում է. «Ուրեմն հարկը՝ ժողովրդին իր պաշտպանությանը գինն է, որ իր կառավարությունը կը վճարի»[2]: Ինչպես նկատել ենք Ն.Զորայանը փոխանակությունը դիտում է որպես հասարակական պահվածքի գլխավոր հատկանիշը: Մի սկզբունք, որը գործում է բոլոր ոլորտներում, հարկային հարաբերություններում նույնպես՝ պետության և քաղաքացիների միջև. «Մարդիկ, ընդհանրապես ամեն արվածնուն դեմ բան մը առնելու սորված ըլլալնուն, եբոր կնային, որ կառավարության վճարած հարկերուն փոխարեն ուրիշ նյութական բան մը չեն առներ, կամ իրենց հաճոյք մը չեն զգար, սիրտերնին կը նեղանա, կը կարծեն որ այն ըրած ծախքերին՝ ուրիշ բոլոր ըրած ծախքերեն տարբեր է, անպիտան է, կամ ինչպես կըսեն ծովը նետեցին, բայց հոս մեծապես կը սխալին: Այս ծախքն ալ մյուս ամեն ըրածնուն նույնն է, կամ ավելի լավ մը ըսեմ, աս ալ ուրիշ ամենուն պես փոխանակություն մըն է:

Արդարև, հացագործին, մսավաճառին, դերձակին, հիվսան դրամ կուտաս վասնզի, քեզ կը կերակրեն, կը հագվեցընեն ու կը բնակեցնեն: Նմանապես երաժշտին, բժշկին ու դերասանին դրամ կուտաս, վասնզի քեզի բժշկություն կամ զբոսանք կուտան: Ահա նույնպես ալ կառավարության դրամ կուտաս, որ քու ստացուածքդ, կեանքդ ու ընտանիքդ պահե... ամեն մարդ պարտական է անիկա վճարելու»[3]: Ակներև են հեղինակի մտածողության տեսական ակունքները:

Լինելով ազատ առևտրի կողմնակից, նրա համար անընդունելի է մերկանտիլիստների ուսմունքը, որը ազգի հարստությունը նույնացնում էր երկրում եղած ազնիվ մետաղների քանակի հետ: Ուստի նա ծիծաղելի ու անհիմն է համարում առևտրական հաշվեկշռի վերաբերյալ կառավարությունների վարած քաղաքականությունը, ոսկու և արծաթի ներհոսքն ավելացնելու ինչ-ինչ միջոցառումները, որոնք ոչ այլ ինչ էին, քան «ճշմարիտ հարստության ինչ ըլլալը չճանաչելու» հետևանք, իսկ դրանք

[1] Նույն տեղում, էջ 108:
[2] Նույն տեղում, էջ 91:
[3] Նույն տեղում, էջ 92-93:

«բոլոր այն նյութական բարիքը, կամ այն օգտակար իրերը պիտի իմանանք, որևիցե կերպով մարդուս պետքերը լեցնելուն կծառայեն (որպես սպառման առարկաներ կամ արտադրության միջոցներ – Ռ.Ս.)»[1]:

Ազատ առևտրի դոկտրինայի ճշմարտացիությունը ցույց տալու համար նա բազմաթիվ վկայակոչումներ է կատարում Սեյից:

Հայտնի է, որ ըստ դասական տնտեսագետների հասարակական շահը անհատական շահերի գումարն է: Զգտումը անձնական շահի բավարարմանը համապատասխանում է ընդհանուրի շահին: Այսինքն, եթե բավարարվում է անձնական շահը, նշանակում է բավարարվում է նաև հասարակական շահը: Սա արդեն ընդհանուր սկզբունք է, որը տարածելի է բոլոր ոլորտների վրա: Հենց այդ դիտակետից էլ Ն.Զորայանը գրում է, թե «ամեն մարդուն իր անձնական շահը՝ առհասարակ անվրեպ երաշխավորող մըն է իր հաջողությանը համար միշտ զինքը մտադիր ընելու, և որովհետև ստույգ գիտենք ալ որ միշտ որև իցե ազգի մը վաճառականաց մեծ մասը՝ իր գործքը գիտե, հայտնի վնասներու մեջ զինքը չի մխեր, ուստի կրնանք թե տեսական և թե գործնական կերպով հաստատել, որ ազատ վաճառականությունը՝ ազգի մը բարօրությանը մեկ առատ աղբյուրն է, կամ որ նույնն է առևտրական կշիռը բոլորովին վնասակար դրություն մըն է, ու մանավանդ սուտ ու հաստատուելն ալ անհնար է...»[2]: Այնուամենայնիվ, նա առանձին դեպքերում անհրաժեշտ է դիտում հայրենական արտադրության ու առևտրի հովանավորչական միջոցների «խիստ օգտակար ու ազգին ալ շատ շահավոր» քաղաքականության կիրառումը[3]:

Ն.Զորայանը գործել է մի ժամանակաշրջանում, երբ հայ իրականությունն ընդառաջ էր գնում դրամատիրական հասարակարգի տնտեսաձևերի ձևավորմանը: Նրա «Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ» աշխատությունը որոշակի արժեք է ներկայացնում նոր տնտեսաձևերին բնորոշ տնտեսական մտածողության կազմավորելու գործում:

---

[1] Նույն տեղում, էջ 203:

[2] Նույն տեղում, էջ 217-218:

[3] Նույն տեղում, էջ 233-234:

«ԱԶՆԻՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ» ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՈՐԱՅԱՆԻ ՀԱՅԵՑՈՒԹՅԱՄԲ

ՌՈԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր: Նիկողայոս Զորայանը գործել է XIX դարի կեսերին: Նա առաջին հայ տնտեսագետն է, որը, ըստ էության, քննության առարկա է դարձրել քաղաքատնտեսության հիմնական կատեգորիաները և, որպես ազատամտական ուղղության ներկայացուցիչ, դրվատել արևմտյան տնտեսաձևի սկզբունքները: Տնտեսագիտությունը նրա լուսավորչական ծրագրի բաղկացուցիչներից է: Նա ուրվագծեց այն բաղադրիչները, որոնք պայմանավորում են ազգի տնտեսական բարեկեցությունը:

Հոդվածում ժամանակի տնտեսագիտական ուսմունքների զուգահեռներում քննության են ենթարկվում նրա հայացքները հարստության աղբյուրների, փոխանակության, աշխատավարձի, բաշխման, սեփականության իրավունքի և այլ հարցերի վերաբերյալ:

Բանալի բառեր. *աշխատանքի բաժանում, փոխանակություն, աշխատավարձ, բաշխում, կապիտալ, սեփականության իրավունք, պահանջմունքներ, առևտրային քաղաքականություն:*

ВЗГЛЯДЫ НИКОГАЕСА ЗОРАЯНА «ВЫГОДЫ БЛАГОРОДНОЙ НАУКИ»

РОБЕРТ НЕРСЕСОВИЧ САРИНЯН, *д.э.н., профессор*
главный научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация: Никогаес Зораян творил в середине XIX века. Он был первым армянским экономистом, который основные категории политэкономики сделал предметом исследования, и как представитель либерального направления восхвалил принципы западных экономических форм. Экономическая наука является составной частью его просветительской программы. Он указал те составляющие, которые обуславливают благосостояние нации.

В статье в параллелях экономических учений того времени подвергается критическому анализу его взгляды на источники богатства, обмен, распределение, заработную плату, право на собственность и т.д..

Ключевые слова: *разделение труда, обмен, зарплата, распределение, право собственности, капитал, торговая политика.*

"THE BENEFITS OF THE NOBLE SCIENCE" FROM THE VIEWPOINTS OF NIKOGHAYOS ZORAYAN

ROBERT NERSES SARINYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract: Nikoghayos Zorayan worked in the mid-nineteenth century. He was the first Armenian economist, whose research objective, per se, was to examine the main categories of political economy, and as a representative of the liberal branch commended the principles of Western economic forms. The Economics as a discipline is an integral part of its knowledge disseminating and/or sharing agenda. He highlighted those components that explain the economic wealth of the nation.

The article critically analyzes his views on the sources of wealth by comparing them with the economic doctrines of the stated period.

Keywords: *Division of labor, exchange, salary, distribution, property rights, needs, trade policy*